Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր՝ Մ. Մակիչյան
« » սեպտեմբերի 2024թ.

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1.Ռեսուրսների նպատակը և կազմը

«Ռեսուրս» եզրը լայն հասկացություն է և ներառում է Հյուսիսային համալսարանի (Մասնագիտական ուսումնական հաստատություն) գործունեության իրականացման և արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ բոլոր նյութական, մարդկային, ֆինանսական, տեղեկատվական և կազմակերպչական միջոցները:

Ռեսուրսների ներքո ՄՈՒՀ-ում կարող են հասկանալ հետևյալը՝

1.1. Մարդկային ռեսուրսներ

- **Պրոֆեսորադասախոսական և ուսուցչական կազմ** – Ուսումնական ծրագրերն իրականացնող մասնագետներ՝ ուսուցիչներ, դասախոսներ, դոցենտներ, պրոֆեսորներ, վերապատրաստողներ:
- **Ուսումնաօժանդակ, վարչական և վարչատնտեսական անձնակազմ** – ՄՈՒՀ -ի գործունեության ոլորտներում քաղաքականության մշակման, իրականացման և վերջինիս վերահսկման, ինչպես նաև համապատասխան ծրագրերի կամ աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացներում ներգրավված անձինք:
- **Ուսանողներ** – Կրթական գործընթացների ակտիվ մասնակիցներ, որոնց կարիքները, գաղափարներն ու ներուժը նույնպես դիտարկվում են որպես ռեսուրս:

1.2. Նյութատեխնիկական ռեսուրսներ

- Ուսումնական ենթակառուցվածքներ՝ գրադարան, ընթերցասրահ, ընդհանուր օգտագործման, մասնագիտացված և տեխնոլոգիապես հագեցված լսարաններ, ուսումնական լաբորատորիաներ, որոնք ապահովում են կրթության իրականացման նյութատեխնիկական հիմքը:
- **Սարքավորումներ և տեխնիկա** – Համակարգիչներ, պրոյեկտորներ, լաբորատոր սարքավորումներ, ծրագրային ապահովումներ, որոնք նպաստում են ուսումնական և գիտահետազոտական գործընթացներին:

Ð³ëï³ïáõÙ »Ù՝
ÐÛáõëÇë³ÛÇÝ Ñ³Ù³Éë³ñ³ÝÇ
é»Ïïáñ՝ Ø. Ø³ÏÇãÛ³Ý

« » սեպտեմբերի 2024թ.

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՊԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1.Ռեսուրսների նպատակը և կազմը

«Ռեսուրս» եզրը լայն հասկացություն է և ներառում է Հյուսիսային համալսարանի (Մասնագիտական ուսումնական հաստատություն) գործունեության իրականացման և արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ բոլոր նյութական, մարդկային, ֆինանսական, տեղեկատվական և կազմակերպչական միջոցները:

Ռեսուրսների ներքո ՄՈՒՀ-ում կարող են հասկանալ հետևյալը՝

1.1. Մարդկային ռեսուրսներ

- **Պրոֆեսորադասախոսական և ուսուցչական կազմ** – Ուսումնական ծրագրերն իրականացնող մասնագետներ՝ ուսուցիչներ, դասախոսներ, դոցենտներ, պրոֆեսորներ, վերապատրաստողներ:
- **Ուսումնաօժանդակ, վարչական և վարչատնտեսական անձնակազմ** – ՄՈՒՀ -ի գործունեության ոլորտներում քաղաքականության մշակման, իրականացման և վերջինիս վերահսկման, ինչպես նաև համապատասխան ծրագրերի կամ աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացներում ներգրավված անձինք:
- **Ուսանողներ** – Կրթական գործընթացների ակտիվ մասնակիցներ, որոնց կարիքները, գաղափարներն ու ներուժը նույնպես դիտարկվում են որպես ռեսուրս:

1.2. Նյութատեխնիկական ռեսուրսներ

- **Ուսումնական ենթակառուցվածքներ՝** գրադարան, ընթերցասրահ, ընդհանուր օգտագործման, մասնագիտացված և տեխնոլոգիապես հագեցված լսարաններ, ուսումնական լաբորատորիաներ, որոնք ապահովում են կրթության իրականացման նյութատեխնիկական հիմքը:
- **Սարքավորումներ և տեխնիկա** – Համակարգիչներ, պրոյեկտորներ, լաբորատոր սարքավորումներ, ծրագրային ապահովումներ, որոնք նպաստում են ուսումնական և գիտահետազոտական գործընթացներին:

- **Գրադարանային ֆոնդ** – Ուսումնառության տպագիր ռեսուրսներ՝ դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, դասախոսությունների տեքստեր, լաբորատոր աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, բառարաններ, հանրագիտարաններ, տեղեկագրքեր, թերթեր, ամսագրեր, ինֆորմացիոն բրոշյուրներ: Ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներ՝ էլեկտրոնային գրքեր և գրականություն, էլեկտրոնային ամսագրեր, պարբերականներ, կայքեր, էլեկտրոնային փոստ:

1. 3. Ֆինանսական ռեսուրսներ

- **Բյուջետային միջոցներ** – Պետական ֆինանսավորում՝ ըստ հաստատված բյուջեի:
- **Նվիրատվություններ և դրամաշնորհներ** – Միջազգային, ազգային և մասնավոր կազմակերպություններից ստացվող ֆինանսական աջակցության միջոցներ:
- **Ուսանողների վճարներ** – Կրթական ծառայությունների դիմաց ստացվող վճարներ:

1.4. Տեղեկատվական ռեսուրսներ

- **Կրթական ծրագրերի տվյալներ** – Ուսումնական պլաններ, առարկայական ծրագրեր, մոդուլներ:
- **Տեղեկատվական հարթակներ** – Համալսարանի կայք, էլեկտրոնային գրադարաններ, ուսուցման մոդուլային համակարգեր (օրինակ՝ Moodle):
- **Վերլուծական տվյալներ** – Ուսանողների առաջադիմության, շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տեղեկատվություն, հարցումների արդյունքներ:

1. 5. Կազմակերպչական ռեսուրսներ

- **Կառավարման համակարգ** – Կառավարման խորհուրդներ, աշխատանքային խմբեր, որակի ներքին ապահովման կենտրոն:
- **Մոնիտորինգի մեխանիզմներ** – Կրթական գործընթացների, ռեսուրսների օգտագործման և որակի ապահովման վերահսկողության մեխանիզմներ:
- **Կապեր շահակիցների հետ** – Գործատուներ, շրջանավարտներ, տեղական ու միջազգային գործընկերներ:

1. 6. Ժամանակային ռեսուրսներ

- **Ուսումնական գործընթացների պլանավորում** – Կիսամյակների, դասաժամերի, քննությունների և այլ միջոցառումների ժամանակացույցեր:

- **Մասնագիտական վերապատրաստումների պլանավորում** – Դասախոսների և աշխատակիցների մասնագիտական զարգացման պլանավորման ժամանակացույց:

2.Ռեսուրսների պլանավորումը

Ռեսուրսների առկայությունը դեռևս չի երաշխավորում դրանց միջոցով ուսումնառությանը և դասավանդմանը օժանդակելու ՄՈՒՀ-ի կարողությունը: Քանի դեռ այդ ռեսուրսները լիարժեք չեն օգտագործվում ուսանողների և դասախոսների կողմից, իսկ դրանց արդյունավետությունը պատշաճ չի գնահատվում՝ այդ ռեսուրսների ներգործությունը ուսումնառության արդյունավետության վրա մնում է անորոշ: Ուստի, ռեսուրսների պլանավորման համար ՄՈՒՀ-ը պետք է գնահատի ուսանողների և դասախոսների կողմից դրանց փաստացի օգտագործման մակարդակը և ունենա ռեսուրսների պլանավորման կանոնակարգված գործընթաց:

3.Ռեսուրսների գնահատումը

3.1.Կրթական ծրագրերի արդյունքների համապատասխանության չափորոշիչներ

- **Ուսանողների առաջադիմություն (GPA):** Վերջին երեք տարիների առաջադիմության տվյալների համեմատություն՝ ռեսուրսների բաշխման հետևանքով արձանագրված փոփոխությունների գնահատման համար:
- **Անցողիկության մակարդակ (Retention Rate):** Բաշխված ռեսուրսների ազդեցությունը ուսանողների ծրագրերը շարունակելու որոշման վրա:
- **Շրջանավարտների քանակ (Graduation Rate):** Շրջանավարտների ընդհանուր թվի ավելացում՝ որպես ծրագրերի արդյունավետության ցուցանիշ:
- **Որակավորումների ձեռքբերում (Learning Outcomes):** Արդյո՞ք ուսանողները հասել են կրթական ծրագրերում նախատեսված ուսումնառության վերջնարդյունքներին:

3.2.Ուսանողների բավարարվածության գնահատման չափորոշիչներ

- **Բավարարվածության մակարդակ:** Ուսանողների շրջանում անցկացվող պարբերական հարցումների արդյունքներ՝ լսարանների, սարքավորումների, տեխնիկական աջակցության և ուսումնական ռեսուրսների հասանելիության վերաբերյալ:
- **Օգտագործման հաճախականություն:** Ռեսուրսների (լաբորատորիաներ, գրադարաններ, տեխնիկական հարթակներ) օգտագործման ինտենսիվության գնահատում:

- **Առցանց և ֆիզիկական ռեսուրսների մատչելիություն:** Ռեսուրսների հասանելիության վերաբերյալ ուսանողների գնահատականների վերլուծություն:

3.3.Դասավանդման արդյունավետության չափորոշիչներ

- **Դասավանդողների բավարարվածության մակարդակ:** Հարցումներ դասախոսական կազմի շրջանում՝ ռեսուրսների մատչելիության և որակի վերաբերյալ:
- **Համագործակցային նախագծերի քանակ:** Բաշխված ռեսուրսների հետևանքով դասախոսների կողմից իրականացված միջդիսցիպլինար նախագծերի ավելացման գնահատում:
- **Ուսուցման նորարարական մեթոդներ:** Արդյո՞ք ռեսուրսները նպաստել են նոր դասավանդման մեթոդների ներդրմանը:

3.4.Աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության չափորոշիչներ

- **Շրջանավարտների զբաղվածության մակարդակ:** Աշխատանքի տեղավորվող շրջանավարտների տոկոս՝ մասնագիտական ուղղություններով:
- **Գործատուների բավարարվածություն:** Գործատուների շրջանում անցկացվող հարցումների արդյունքներ՝ շրջանավարտների հմտությունների և գիտելիքների վերաբերյալ:
- **Մասնագիտական վերապատրաստման ծրագրերի ընդգրկվածություն:** Արդյո՞ք ռեսուրսները նպաստել են ուսանողների մասնագիտական պատրաստության մակարդակի բարձրացմանը:

3.5.Նյութատեխնիկական ռեսուրսների արդյունավետության չափորոշիչներ

- **Ռեսուրսների օգտագործման տոկոսադրույք (Utilization Rate):** Օրինակ՝ լսարանների, լաբորատոր սարքավորումների կամ տեխնիկական հարթակների օգտագործման ինտենսիվությունը:
- **Պահեստավորված ռեսուրսների ծախսման մակարդակ:** Ռեսուրսների պարբերական օգտագործման դինամիկա՝ անօգտագործված միջոցների բացահայտման համար:
- **Նոր տեխնոլոգիաների ներդրման ցուցանիշներ:** Թարմացված տեխնոլոգիաների ներդրման և դրանց օգտագործման արդյունքների գնահատում:

3.6.Ֆինանսական արդյունավետության չափորոշիչներ

- **Բյուջետային պլանավորման համապատասխանություն:** Ռեսուրսների բաշխման համապատասխանություն նախապես հաստատված բյուջետային պլանին:
- **Մեկ ուսանողի հաշվով ծախսեր:** Ռեսուրսների բաշխման ազդեցությունը կրթական արդյունքների և ֆինանսական ծախսերի հարաբերակցության վրա:

- **Ինքնաֆինանսավորման կարողություն:** Արդյո՞ք բաշխված ռեսուրսներն օգնել են մուտքերի ավելացմանը (օրինակ՝ նոր ուսանողների ներգրավման միջոցով):

3.7.Որակի բարելավման և մշտադիտարկման չափորոշիչներ

- **Կրթական ծրագրերի վերանայման հաճախականություն:** Ռեսուրսների օգտագործման հետևանքով իրականացված փոփոխությունների քանակ և հաճախականություն:
- **Ուսանողների և դասախոսների առաջարկությունների ինտեգրում:** Նոր ռեսուրսների ներդրման հիման վրա արձագանքված շահակիցների առաջարկությունների քանակ:
- **Կառավարման որոշումների արդյունավետություն:** Արդյո՞ք ռեսուրսների բաշխման արդյունքում որոշումների որակը բարելավվել է:

4.Ռեսուրսների գնահատման ձևեր

- Պարբերական հետազոտություններ (հարցումներ, ֆոկուս խմբեր, տվյալների վերլուծություն):
- Մոնիտորինգային խմբերի ստեղծում, որոնք պարբերաբար կհետևեն ռեսուրսների օգտագործման արդյունքներին:
- Հաշվետվությունների պատրաստում և ներկայացում, որոնք կամրապնդեն որոշումների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: